



Ցեղասպանության ոգեկոչման 110-րդ տարելիցին առիթով մտաւորականութեան սպանողը, որ ծնունդ տուաւ մտադրուած և ծրագրուած ցեղասպանութեան: Աշխարհասփիւռ հայ ժողովուրդը կը յիշէ ու կը պահանջէ իր արդար դատը, հայրենի հողերը եւ իր նահատակներու հոգու հանգստութեան համար պայքարը կը շարունակէ մինչեւ ցանակալի յաղթանակ:

Նա ով ջընդունիի ցեղասպանութիւնը կը մնայ խոնարհուած արիւնալի սուտին և մեղսակից:

With the imprisonment and the killings of the Armenian intellectuals the turks put in action the premeditated extermination of the Armenian population , hence committing the very first GENOCIDE of the 20th century. To this day on the 110th anniversary commemoration of this horrible massacres Armenians Remember and Demand as the rightful owners of their ancestral historical lands and continue the struggle, so the souls of our sisters and brothers find eternal peace and recognition is complete.

And those who persist in denying the Armenian Genocide continue to bow to the lies regardless of the flowed blood to the last drip of so many guilt free, innocent victims. Their crime was being Armenian.

PLANAR

OPEN EVERY DAY - 8AM UNTIL LATE
BREAKFAST | LUNCH | DINNER
WATERFRONT VIEWS



COCKTAIL MASTERCLASSES
PIZZA MASTERCLASSES
PASTA MASTERCLASSES
GIN & WHISKY TASTING CLASSES

DARLING HARBOUR, SYDNEY
PH: (02) 9212 6789
INFO@PLANARRESTAURANT.COM.AU

 /PLANARRESTAURANT

 /PLANARRESTAURANT



Խմբագրական— Սարգիս Մանուկեան

Հայկական Հայոց Ցեղասպանութեան 110-րդ Ոգեկոչման առիթով՝ 1915 – 2025
ՆԱԽ ՏԱՆՔ ԱՊՐԻԼ 24-Ի ՊԱՏՄԱԿԱՆԸ

Ապրիլ 24-ի յիշատակութեան մասին, առաջին անգամ , գրող Երուանդ Օտեան Պոլսոյ «Ժամանակ» օրաթերթին մէջ առաջարկած է 1915թ.ը անմեղ զոհերու եւ ԵՂԵՌՆԻ յիշատակի օր ընդունիլ, իսկ գրող եւ Վաղարշապատի դպրոցներու տեսուչ՝ Վրթանէս Փափագեան նամակով դիմած է Գեորգ Ե. Ամենայն հայոց կաթողիկոսին՝ առաջարկելով որ Ապրիլ 24-ը իւրայատուկ նահատակներու յիշատակման օր նկատուի, մտաւորականներու ձեռքակալման , որոնք 1915թ.ի Ապրիլ 23-ի եւ 24-ի գիշերը ձեռքակալուեցան եւ ՊՈԼՍՈՅ Հայտարարաշար կայարանէն փոխադրուեցան դէպի ԱԵԱՇ, ՉԱՆԴԸՐԸ եւ այլ սպանդանոցներ:

Կաթողիկոսարանի դիւանատան շրջափերականով , ինչպէս նաեւ կաթողիկոսի կոնդակով հրահանգուած է ԱՊՐԻԼ 24-Ը ԸՆԴՈՒՆԻԼ, որպէս մեծ ԵՂԵՌՆԻ(Ցեղասպանութեան) օր եւ բոլոր եկեղեցիներուն մէջ կատարել հոգեհանգստեան պաշտօն:

Ապրիլ 24-ը Խորհրդային Հայաստանի մէջ սկսաւ նշուիլ 1965 թուականէն սկսեալ, որմէ երկու տարի վերջ կառուցուեցաւ ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴԻ յուշահամալիրը, իսկ 1999-ին՝ թանգարանը

Իւրաքանչիւր պատմութիւն ունի վերջ ու վախճան, բայց կեանքի մէջ իւրաքանչիւր վերջ կը նշանակէ նաև նոր սկիզբ: Այսօրուայ Հայաստանը Հայ ժողովուրդը ընդհանրապէս ի հայաստան եւ ի սփիւռս աշխարհի կենդանի վկայութիւն մըն է մեր անմահ հոգիին եւ մարմնին, որ դուք, ձեր նախնիները ձեր եաթաղանով, սուրով ու փամփուշտով փորձեցիք արմատախիլ ընել, ոչ միայն իրենց խաղաղ բնակավայրին մէջ, այլ նաև պատմութեան էջերէն, որ կը շարունակուի մինչև այսօր նպատակ ունենալով բնաջնջել հայկական մշակոյթ , կոթողներ ու տաճարներ, որոնք միջազգային մակարդակով ճանչցուած եւ գնահատուած են:

Կրնաս կտոր մը հող առնել , բռնագրաւել, սեփականացնել, բայց պատմութիւնը վկայ, Փարաւոններու անէծքով , մեր խաչքարերը վկայ, հողը անգամ վրիժառու պիտի ըլլայ, այն բոլոր արհաւիրքներուն համար որ պատճառեցիք արիւնարբոյ եւ գազանաբարոյ

ախորժակներդ հագեցնելու համար: Լաւ իմացիր , որ բնաւ երբեք պիտի չկարողանաս տիրանալ մեր ոգիին , հոգիին ու մարմնին և մեր ունեցած դրոշմը այսօր նոյնիսկ ակնյայտ է ձեր փառաւորեալ քաղաքներուն մէջ մանաւանդ ճարտարապետական և շինարարական գետնի վրայ: Մենք կանք ու պիտի մնանք:

Քաջութիւնդ երեխաներու , մայրերու և կիներու վրայ է պատսպարուած արտաքին ուժերու վահանով , որոնք հաւասարապէս մեղսակից են քեզի հետ, բայց այդ ամէնը վերջ պիտի գտնէ , նոյնիսկ եթէ անցնի 100 տարի մը եւս:

Դուն նման ես ուռած փուշիկին, որ առաջին հովին պիտի չքանայ անհուն հորիզոնին և կուլ երթայ բաց ովկիանոսի ալիքներուն , որոնք գոյացած են հայուն թափած արցունքներով, ինչպէս ովկիանոսը մեր արցունքը եւս աղի է և այ այդ ովկիանոսի ահեղակուլ ալիքները պիտի դառնան անշիրիմ գերեզմանդ. Ինչպէս անապատին մէջ կորած մեր հայրերուն, քոյրերուն և եղբայրներունը բայց հաւաքուած անոնց յաջորդող սերունդներուն կողմէ և որպէս մասունք պահուած : Ո՛վ պիտի հաւաքէ ձեզ: Եւ այսպէս կը կորչես առ յաւետ: Եւ մեր հայածին բանաստեղծին խօսքերով կ'ըսենք « Դուք հողմերի պէս կը կորչէք վայրագ ու յաւետ:

Պատմութիւն և մշակոյթ որ կը փորձես խեղադիրել և սեփականացնել կամ ուրանալ հազարամեակներու պատմականը որ ոչ մէկ հետք չմնայ , բայց այս ամէնուն վրայ, դուն ես որ պիտի կորսուիս , անհետանաս և դառնաս թանգարանային: Դուն պիտի չտեսնես 21-րդ դարի մայրամուտը և հետեւաբար Հայ ժողովուրդի Նոր ու պայծառ արշալոյսը:

Այսօր , ուրացումի կողքին կը շարունակես մշակութային ջարդ Ատրպէյճանի աջակցութեամբ , որ դարձած է դաշունահար ձեռքդ, եւ նոյնը կ'իրագործէ մանաւանդ Արցախի տարածքէն ներս:

Միացեալ Ազգերու Կազմակերպութեան ԻՒՆԵՍԿՈ թելը տակաւին 1974 թուականին արձանագրած է , որ 1923 թ.ի տուեալներով 913 հայկական մշակութային և պատմական կոթողներէն 464-ը բոլորովին ոչնչացած են, 252-ը աւերակ և 197-ը նորոգութեան կարօտ: Այսօր 51 տարի վերջ նոյնը նոր թափով և հետեւողական կերպով կը կատարուի Հայկական մշակոյթի և կոթողներու հետ Ատրպէյճանի տարածքին : Կարելի է Երեւակայել պատկերը Թուրքիոյ տարածքին: Շատ մը պարագաներուն եկեղեցիներ վերածուած են մզկիթի:

110 տարի վերջ աշխարհը կարծես վերաձեւաւորման մէջ է շատեր կ'ակնարկեն նաև նոր աշխարհագրական քարտէսներու և նոր սահմաններու հնարաւորութեան մասին: Ի՞նչ կրնայ ըլլալ մեր Հայաստան հայրենիքի պարագան և ապագան:

Նկատի առնելով օրուան շուկները պիտի չուզէինք և բոլորովին հակառակ ենք որ Հայոց Յեղասպանութիւնը ՀՀ համար սեղանի վրայ դրուած խնդրոյ առարկայ ըլլայ կամ առ ու ծախի:

Մենք մտահոգուած ենք Մեղրիի, Զանգեզուրի ճակատագրով, հարց մը որ կը մտահոգէ բոլորս, սակայն ըստ Թաթուլ Յակոբեանի՝ Լրագրող և «ԱՆԻ» Կեդրոնի համակարգող Մեղրիի փոխանակման հարցը պատմականօրէն կ'երթայ մինչև 1920 աւան թուականները , և դարձեալ Բրիտանացիներու քաղաքական մօտեցումով և օժանդակութեամբ հայեր պատրաստ եղած են Զանգեզուրը զիջել , ունենալու համար Նախիջևանը և այլ դիրութիւններ Արցախի փոխանակումով: Հետեւաբար փոխանակման կամ զիջողական այս մօտեցումը նոր չէ: Մեղրին մեզի հայութեան համար ՄԵՂԴ է և Զանգեզուրին համար բանաստեղծին բառերով դարձեալ կ'ըսենք

«Երբ Թիմուրն ահեղ հասաւ հայաստան , սուրի զարնելով մեր աշխահն առաւ , կ'ըսեն թէ Սիւնեաց ծերերն իմաստուն մի զանգ կախեցին մեծ ու ահարկու» , որուն ղօղանջը պիտի աւետեր թշնամիին մօտալուտ յարձակումը, որմէ նաեւ շրջանի անունը:

Այսօր եւս ահագանգ մըն է մեզի համար և զանգին ձայները կը հնչեն անդադար: Մեր հողը մեր երկիրն է , մեր տունը և Արաքս գետի ոչ աջափնեակ և ոչ ալ ձախափնեակ տարածքէն կ'ուզենք ոչինչ կորսնցնել, ժամանակն է որ Հայաստան ունենայ գումարում և բազմապատկում և ոչ թէ հանում և բաժանում մեր նահատակներուն արեան կանչը տակաւին արդարութեան կարօտ է և ոչ նոր հնարաւոր զիջումներու:

Փանամայի ջրանցքը և ՀՀ առաջարկած խաղաղության նպատակով տնտեսական ճանապարհներն երևու Խաչմերուկը Peace Road Map

Սարգիս Մանուկեան

Այսօր իրողությունն է, Թրամփ Ամերիկայի 47-րդ նախագահին է, նախապես եղած է նաև 45-րդ նախագահը: Հակաթափն գրասենեակին կամ այլ պատուանդաններին իր յայտարարությունները, թեև ցնցիչ բայց միեւնոյն ժամանակ մտահոգիչ են: Ժամանակը ցոյց կու տայ թէ ի՞նչ հետեւանքներ կրնայ ունենալ Հայաստանի կամ ընդհանրապես շրջանի՝ Կովկասի և Միջին Արեւելքի համար:

Գաղտնիք չէ, որ Թրամփ բացէ ի բաց կ'արտայայտուի Գանատայի մասին որպէս 51-րդ նահանգ, որուն կողքին կ'ուզէ վերատիրանալ Փանամա ջրանցքին և հակառակ պարագային, եթէ ոչ դրամով, զենքով տիրանալ նաեւ Կրիկանտային, որը որպէս կղզի կը պատկանի Դանիական իշխանութեան և մաս կը կազմէ թագաւորութեան, հակառակ որ բնիկ ժողովուրդը և ընդհանրապէս Կրիկանտային ունին ինքնակառավարման քաղաքական արտօնություններ և դիրություններ և բացարցակապէս կը մերժեն նմանօրինակ մօտեցում կամ արդիւնք:

Արեւմտեան աշխարհի այս հեռաւոր ափերուն հնարաւոր փոփոխությունները կրնայ ըլլալ որ չազդեն Հայաստանին, բայց ապշեցուցիչ է Կազայի նկատմամբ նախագահին յայտարարությունը, որ կ'ուզէ տեղահանել հողամասի բնակչությունը և Ամերիկեան գերիշխանութեան տակ դնել: Փաստօրէն հրաւեր հրեաներուն որ բռնագրաւեն տարածությունը և ապա իրականացնեն Երուսաղէմի ծրագիրը զայն Իսրայէլի մայրաքաղաք դարձնելով: Ինչպէս ծանօթ է Իսրայէլի իշխանութիւնները Հայկական Երուսաղէմի Պատրիարքութեան պատկան հողամասերու նկատմամբ ոտնձգություններ ունին, որ ընթացքի մէջ է: Ծանօթ է նաև թէ ինչպէս Իսրայէլ զինած է Ատրպէյճանը տրամադրելով զինամթերք, որ գործածուած է Արցախի բռնագրաւման ընթացքին:

Դժուար է մտածել, որ Իսրայէլ վերադարձնէ Կոլանի գրաւեալ բարձունքը և այլ հողատարծք, հիմա որ Սուրիոյ իշխանությունները փոխուած են Ասատի անկումէն վերջ: Կարելի չէ երեւակայել թէ այն հողամասին վրայ, որ Յիսուս քալած, քարոզած, հրաշքներ գործած է, 2000 տարի վերջ դարձած է կռուախնձոր և նաև պայքար 3 հարանուանություններու, որ կը գտնուին հոն՝ Իսլամական, Յուդայական, Քրիստոնէական կրօնքներուն միջեւ: Միջին Արեւելքը ամբողջութեամբ կը տառապի այս հանգոյցէն և Հայաստանի, որպէս քրիստոնէայ ըլլալը, փուշ է այս բոլորին վրայ, հետեւաբար զարմանալի չէ որ ենթակայ է փշագերծման: Հէնրի Քիսընճէրի համաձայն, որ ծառայած է որպէս ԱՄՆ Արտաքին Գործոց նախարար կամ պետութեան քարտուղար 1973-1977 և ազգային անվտանգութեան խորհրդատու 1969 թուականէն մինչեւ 1975, ծնունդով հրեայ, ըսած ըլլայ, «Ամերիկայի թշնամի ըլլալ վտանգաւոր է, իսկ Ամերիկայի բարեկամ ըլլալը ճակատագրական»:

Ըստ երոյթին Իսրայէլի բարեկամությունը Ամերիկայի հետ կամ հակառակը ունի և ունեցած է տարբեր հետեւանք, այսինքն Իսրայէլի համար նախախնամական, որ վերջերս և մանաւանդ Կազայի պատերազմէն վերջ արդիւնքը և յայտարարությունները ցոյց կու տան:

Ճէֆրի Սաքսի համաձայն՝ Ամերիկացի տնտեսագէտ և հանրային քաղաքական վերլուծաբան, դասախօս Քոլումպիա համալսարանի և կրթությունը ստացած Հարվըրտ համալսարանէն, որ այս օրերուս յաճախ իրեն կը հանդիպինք տարբեր ելոյթներու ընթացքին, ըսած ըլլայ «Եւրոպան չունի արտաքին քաղաքականություն հլու հնազանդ ծառան է ԱՄՆ-ն, իկ իր կարգին Ամերիկայի արտաքին քաղաքականությունը կը պատրաստուի Իսրայէլի մայրաքաղաք Թէլ Ավիվի մէջ և ոչ թէ Ուաշինկթոն»: Անոր համաձայն Միջին Արեւելքի բոլոր

Ճեֆրիի համաձայն Միջին Արեւելքի բոլոր կոնիները ներառող Սուտան եւ Սոմալիա ունին Բսրայէլի «ԱՄՏ» Ճեֆրի առաջ երթալով կը յայտարարէ համոզիչ կերպով որ Իրաքի Ամերիկեան ներխուժումը կամ յարձակումը կանխամտածուած և ձեւաորուած է Բսրայէլի կողմէ, ինչպէս միւս արաբական պատերազմները: Լիբանան, Լիպիա և Սուրիա: Այսօր գաղնիք չէ այլեւս որ Բսրայէլի երազային ցանկութիւնը պատերազմական ճակատ բանալ է ԱՄՆ և Իրանի միջեւ: Այն ժամանակ իսկապէս կ'ունենանք կամ կը սկսի համաշխարհային Գ. Պատերազմը և ոչ թէ որպէս հետեւանք Ուկրանիա և Ռուսաստան պատերազմին: Ժամանակը ցոյց կու տայ և նախագահ Թրամփին ու անոր աշխատակիցներուն մօտեցումը և առած քաղաքական ու զինուորական քայլերը և մանաւանդ միջամտութիւնները:

Նկատի առնելով արաբական համատարած աշխարհը և ունեցած կարողութիւնները՝ զինուորական, տնտեսական (քարիւղ և կազ) ինչպէս նաև թիւ կը մնան անգոր լուծելու այս երկարամեայ Պաղեստինեան հարցը, որ իր ժամանակին ԱՄՆ նախագահ Քլինթոն և Եասէր Արաֆաթ մերձեցումով յոյս տուին : Բայց արդեօք կարելի է վստահիլ Արեւմտեան աշխարհի խոստումներուն, մենք հայերս փորձառութեամբ գիտենք և արեւան գինով սորված, բայց հին դասերը կարծես ոչինչ կը նշանակեն և տակաւին կը կրկնուին: Հայաստան կը գտնուի բազմաէլք խաչմերուկի առջև և ընտրութիւնը միշտ պիտի ունենայ ընդդիմադիրներ: Քաղաքական աշխարհի ներկայ ովկիանոսին մէջ ի՞նչ ուղղութիւն պէտք է բռնել Արեւմտեան թէ Ռուսական, մանաւանդ երբ չունինք կողմնացոյց ապահով նաւահանգիստ հասնելու: Ի միջի այլոց յիշեցնենք, որ հայաստան, այլ երկիրներու շարքին կը ճանչնայ Պաղեստինը և ջատագով է երկու պետութիւն ձեւաչափին՝ քով-քովի դրացիական և բարեկամական ու խաղաղ յարաբերութիւններով: Շատ հաւանաբար Բսրայէլի վարչապետ Նէթանեահուի օրերը ևս համրուած ըլլան, հասկնալի պատճառներով:

Կացութիւնը անկայուն է Միջին Արեւելքի տարածքին, բռնկած լուցկիի կը նմանի, ռումբի պատրոյգին մօտ: Միջին Արեւելքի այս թնճուկին մաս կը կազմէ նաև Իրանական Իսլամական հանրապետութիւնը, որ հակառակ Արտաշէսեան և Արշակունեաց թագաւորութեանց շրջանի մեր թշնամական յարաբերութիւններուն միակ բարեկամ երկիրն է ոչ թէ ի սեր մեր յօնքերուն այլ ի սեր իր աչքի լոյսին: Շատ հաւանաբար ներկայ քաղաքական պղտոր ջուրերուն մէջ կրնայ ապահովութիւն և վստահութիւն ներշնչել: Վստահ ենք, որ Թուրքիոյ և Ատրպէյճանի դիրքերը և ախորժակները պիտի չփոխուին: Թուրքիոյ պարագային մանաւանդ Սուրիոյ իշխանութեան փոփոխութենէն վերջ աւելի եւս ամրապնդուած ու զօրացած կը թուի:

Ուքրանիայի և անոր նախագահին մղած պատերազմի մասին տարբերակները շատ են, նախապէս արտայայտած ենք մեր տեսակէտը այս անգամ կը հաւատանք որ անոր նախագահին օրերը համրուած կը թուին: Ի՞նչ է Եւրոպայի վարած քաղաքականութիւնը, հասկնալի չէ: Ի՞նչ կը հետապնդէ: Չի բաւեր ցարդ եղած մահն ու կոտորածն ու աւերը: Ռուսաստան ի հեճուկս միջազգային դիրքորոշումին, ոչինչ կորսնցուցած է, բացի անմեղ զոհուած զինուորներէն: Փութին այս օրերուս, անկախաբար խաղաղութեան իր պատրաստակամութեան, առաջարկած է նաեւ ուղիղ թրիչքներ վերսկսիլ Ամերիկայի և Ռուսաստանի միջև : Կարծեմ պատկերը յստակ է, թէ տնտեսական արգելափակումները և պատժամիջոցները իրենց ենթադրեալ արդիւնքները չեն տուած, ընդհակառակը, Ռուսաստանի արդիւնաբերութիւնը 4.1 տոկոսով աճած է այդ նոյն ժաշանակաշրջանին, մինչ Եւրոպայինը 0.7 (GDP): Ընդհակառակը պատճառ եղած, որ Ռուսաստան աւելի ևս մերձենայ Չինաստանին ու Հնդկաստանին:

Առ ի տեղեկութիւն ներկայ տուեալներով Չինաստան մինչև 2030 թուականը պիտի դառնայ մեծագոյն արդիւնաբերութիւնը, որուն պիտի հետեւի ԱՄՆ, իսկ երրորդ հորիզոնականին՝ Եւրոպական Միութիւն: Չինաստանի և հնդկաստանի տնտեսական և քաղաքական կապերը որ ունի ՀՀ քաջալերական է, յուսադրական բայց ոչ աւելին, գոնէ ներկայիս:

Քաջալերական է նաև որ այս երկու երկիրները Ռուսաստանի հետ միասին մաս կը կազմեն ՊՐԻՔՍ խմբակին(BRICS) Պրագիլ , Ռուսաստան , Հնդկաստան Չինաստան, և հարավային Աֆրիկե: Հնարավոր թեկնածուներ որոնք պատրաստ են միանալու կամ արդեն միացած՝ Մեքսիքա, Սաուդի Արաբիա,Քաթար, Քուեյթ, Պահլեյն , Օման, Միացեալ Արաբական Էմիրություններ,Հարավային Քորեա, Նիոյնիսկ Թուրքիա ձգտումներ ունի: Իսկ 1 Յունուար 2025-էն սադին ՊՐԻՔՍԻ Ընկեր անդամ կը նկատուին Պելարուս,Պոլիվիա,Ղազախստան, Քուպա, Մալեզիա , Թայլանտ, Ուկրայինա, Ուզպէքիստան և Նիճէրիա: Հայաստան ևս պէտք է միանայ այս խմբակին, թէև որպէս հիւր երկիր մասնակցած է յիշեալ խմբակի 16-րդ համաժողովին 24 Հոկտեմբեր 2024-ին և առընթեր հանդիպած նաև Ատրպէյճանի նախագահին՝ Իլհամ Ալիևին

Վերադառնանք Փանամա ջրանցքին

Փանամա ջրանցքը ինչպէս նաև Սուէզը համաշխատհային տնտեսութեան , առևտուրի բազկերակներն են, անկասկած զինուորական և քաղաքական ուշադրութեան առարկան:

Սուէզի ջրանցքը Միջերկրական և Կարմիր ծովերուն միջոցով Եւրոպան կը կապէ արաբական ծոցին և հեռաւոր Արեւլքին՝ Ասիոյ: Ֆրանսացի դիւանագէտ Ֆերտինանտ Լէփսէփս սկսած է աշխատանքը 1859 թուականին և աւարտած 1869-ին, 193,3 Կմ երկարութիւն ունի և գրեթէ ծովային մակերես : Շինարարութեան ընթացքին զոհուած են 130,000 բանուոր

Փանամա ջրանցքը 82 Կմ երկարութիւն ունի և նաւարկելը բաւական բարդ : Փանամա նախապէս կը պատկանէր Գոլումպիային և իր անկախութիւնը ստացած է 1903-ին Ամերիկացիներուն աջակցութեամբ և 1904-ին սկսած են աշխատանքները և աւարտած 1914-ին: Գոլումպիայի պատկան շրջանին դարձեալ ֆրանսացիներու և Ֆ. Լէփսէփսի գլխաւորութեամբ աշխատանքներ սկսած են 1881-ին , սակայն դադրած 1889-ին նիւթական մեծ կորուստներու պատճառով ինչպէս նաեւ արեւադարձային հիւանդութիւններու՝ մալարիա եւ այլ ախտերու պատճառով : Փանամա ջրանցքը կը կապէ Խաղաղական և Ատլանդեան ովկիանոսները բայց նաւարկութիւնը բաղտատած Սուէզին դժուար է, բայց կարելի, իսկ շահաբաժինը՝ աստղաբաշխական: 1977 թուականին փոխադարձ համաձայնութեամբ ՃԻՄԻ ՔԱՐԹՐԸՆ Նախագահի օրով տնօրինութիւնը յանձնուած է Փանամային , որուն անունով նաև ջրանցքը: Այսօր Թրամփ կ' ուզէ վերատիրանալ ջրանցքին: իսկ իր կարգին Եգիպտոսի նախագահ Քամալ Ապտէլ Նասեր իր օրին ազգայնացուցած է ջրանցքը 26 Յուլիս 1956-ին , որ մինչ այդ կը գտնուէր Ֆրանսական և Անգլիական Տնօրինութեան տակ:

Պարզապէս արձանացրութեան համար յիշեցնենք որ աշխարհի ամենաերկար ջրանցքը կը գտնուի Չինաստան և ունի 1800 Կմ երկարութիւն , արհեստական է և ամենահինը և իր ճանապարհին կը միացնէ 6 գետ սկսելով Պէյճինկ մայրաքաղաքէն հասնելով մինչև Հանկժու, կը նկատուի Իւնէքոյի Միջազգային ժառանգութեան մաս: Ջրանցքը շինուած է Նք. 468 թուականին, հաւելումներ եղած են Նք. 221 թուականին իսկ աւելի ուշ՝581 թուականին շահագործելու համար ԵԱՆԿՅԷ գետի տելթան, իսկ 604-էն 609 թթ, հասած է իր աւարտին: Գաղափար մը տալու համար Հայաստանի Արփա-Մեւան ջրատար փապուղին 49Կմ երկարութիւն ունի , սակայն փորուած է պատռելով լեռներու կուրծքը, Եղեգիս գետի ջուրը Մեւանա լիճ հասցնելու համար: Չունի տնտեսական , առևտրական միջազգային բնոյթ , նպատակը եղած է լիճի պահպանում և ոռոգում եւ ջրածին ելէքտրակայան ուժանիւթի արտադրութեան համար:

Նկատի առնելով Փանամայի հարցը և տիրող տիրակալ ցանկութիւնները և նաև Փանամա ջրանցքին բնապահպանումի հետ կապուած հարցերը և տարիներու ընթացքին ջուրի պակասը և յարակից այլ դժուարութիւններ և այլ մրցակցութիւններ, Հայաստանի Խաղաղութեան առաջկով սեղան դրուած ճանապարհային խաչմերուկը և երկաթուղային

ծրագիրները, սկսած են ուշադրության և քննության առարկայ դառնալ: նկատի առնելով Հնդկաստանի և Չինաստանի աճող տնտեսությունը և քաղաքական մոտեցումը, որ կարելի է բարեկամական նկատել ՀՀ հետ, կը ստեղծել տնտեսական մեծ հնարավորություններ Ասիական ցամաքամասին: Կայունություն և հարստություն Հայաստանին և ճնշումի տակ զիջողական քաղաքականություն Թուրքիոյ և Ատրպեյճանի՝: Առաջարկուած ճանապարհային եւ երկաթուղային ցանցը կրնայ Արեւլքը(Ասիան) Արեւմուտքին միացնել, ինչպէս նաև արաբական Ծոցը՝ Կովկասին ինչպէս նաև Ռուսաստանին: Աշխատանքը շատ է և մեր բոլորին մասնակցութիւնը՝ հրամայական:

ՀՀ Էլեւմուտքի Նախարարը Լիբստեմպուրկի Մէջ Նշած Է «Խաղաղութեան Խաչմերուկ»-ի Եւ ԵՄ-ի Հետ Գործընթացին Կարեւորութիւնը

ՀՀ Էլեւմուտքի նախարար Վահէ Յովհաննիսեան Լիբստեմպուրկի մէջ մասնակցած է EIB Group Forum 2025-ի շրջանակներուն մէջ կազմակերպուած «Օգտագործելով ԵՄ ընդլայնման հնարավորութիւնները» խորագրով քննարկման:

Քննարկման ծիրին մէջ Վահէ Յովհաննիսեան անդրադարձած է Հայաստանի՝ ԵՄ-ին անդամակցելու գործընթացին առնչուող քանի մը կարեւոր հարցերու:

Նախարարը, մասնաւորապէս, խօսած է տարածաշրջանին մէջ հակամարտութիւններու խաղաղ կարգաւորման անհրաժեշտութեան, «Խաղաղութեան Խաչմերուկ» ծրագրի, ինչպէս նաեւ այս ծիրին մէջ Եւրոպական ներդրումային դրամատան հետ համագործակցութեան եւ օտարերկրեայ ուղիղ ներդրումներու ներգրաւման կարեւորութեան մասին:



Ծնունդ

Ուրախութեամբ կը հաղորդենք, ինչպէս նաև Մանուկեան և Անճելիքաս ըտանիքները, որ Տէր և Տիկին Կարէն և Անճելինա Մանուկեանները Բախտաւորուած են իրենց առաջին դստեր զաւակով, որ տեղի ունեցաւ Մարտ 15-ին, զոր անուանած են

Լարա Մանուկեան

Այս ուրախ առիթով մեծ հայրը՝ Մարգիս Մանուկեան և մեծ մայրը Սոնա Մանուկեան ՀԲԸՄ-ին կը նուիրեն 200 տոլար,



Կը շնորհաւորենք մանկան ծնունդը և մեծ ծնողները, ինչպէս նաև բախտաւոր ծնողքին կը մաղթենք լաւագոյնը, իսկ նորածին մանկան՝ բախտաւորութիւն, երջանկութիւն, առողջ ու երկար տարիներ և շուտափոյթ ապաքինում մօրը՝ իր ծննդաբերութեան ցաւերէն:





ARMENIAN COMMUNITY WELFARE CENTRE

We provide a range of services that cater to various demographic groups in the community.

Some of our services are funded by the Department of Health under the Commonwealth Home Support Programme

ACWC is a Not-for-Profit Organisation and a Public Benevolent Institution and has endorsement as a deductible gift recipient.

10 Macquarie Street, Chatswood NSW 2067
www.armenianwelfare.com.au

SOCIAL SUPPORT GROUP

This support is provided to people aged 65+, these structured activities are provided in a group-based environment and designed to develop, maintain and support social interaction and independent living.

Tuesday, Wednesday, Thursday and Friday 9:30am to 1:30 pm Edgarian Hall, Chatswood.

Monday and Friday 9:30am to 1:30 pm Batmanian Hall, Wentworthville.

Group Excursions

Monthly Group Excursions are conducted by the Centre's staff.

SOCIAL SUPPORT INDIVIDUAL

Visiting services, telephone and web-based monitoring, accompanied activities such as shopping and Dr appointments.

CENTRE BASED RESPITE

Tuesday, Wednesday, Thursday and Friday 9:30am to 1:30 pm Edgarian Hall, Chatswood.

DOMESTIC ASSISTANCE

General house cleaning, linen services, unaccompanied shopping.

TRANSPORT SERVICES

Direct transport services where the trip is provided by a worker or a volunteer.

MEALS SERVICES

Meals prepared and delivered to the client's home.

FLEXIBLE RESPITE

We provide quality respite care for frail aged people, so that the carers can take a break.

We also assist with referrals to My Aged Care, to other organisations and services that are best suited to you.

CONTACT

☎ 02 9419 6394 | 0402 818 421

✉ welfare@armenian.com.au

📱 @ACWCNSW

EM Funerals

Serving the Armenian community with dignity, compassion & excellence

We will always answer your call to help

Ello Meguerditchian

m | 0405 675 571

ph | 1300 076 100

e | ello@emfunerals.com.au

Office address (by appointment)

Suite 7, Level 1,

174 Willoughby Road

Naremburn NSW 2065



Միտնիի Հայ գաղութի կողմէ ճանչցուած **Էլլո Մկրտիչեանը** պատրաստ է լաւագոյնս օգտակար հանդիսանալու թաղմանական ամբողջական ծառայութեան սպասարկութեան

Personalised, professional service • Burial or cremation services • Complimentary concierge service
Repatriation of remains • Fluent in English and Armenian languages • All cultures

For your peace of mind, ask about our Pre-Paid Funerals*

3 years interest-free payment plan available

*For funeral services only, burial plots not included

emfunerals.com.au

Յարգանքի Տուրք և Ողջերթի Երեկոյ Նուիրուած Աւստրալիոյ և Նոր Զելանտայի Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տէր Հայկազուն Արքեպիսկոպոս Նաճարեանին:

Բանաստեղծին խօսքերով (Դ. Վարուժան) «Հայր իմ օրինէ ժամը հասաւ , պիտի երթամ, նոր կեանք մը ինծի կը սպասէ..... »

Այո՛ ժամը հասաւ , որ մեր սիրելի Առաջնորդ հայրը եւս ըսէ-

«Գաղութ, օրինէ ժամը հասաւ պիտի երթամ, առաջնորդութիւն կը փոխանցեմ,

Մայր Հայրենիք , Մայր Աթոռ ինձ կը կանչէ»

Կիրակի Մարտ 23-ին անկլինադարձային երեկոյ մը կարելի է նկատել Աւստրալահայ գաղութի յուշատետրին մէջ: Կարծես երէկ էր , որ եկեղեցւոյ վարչականներ , գաղութի պատուարժան ներկայացուցիչներ, հայորդիներ օղակայան հաւաքուած էին դիմաւորելու գաղութիս նորանշանակ Առաջնորդ հայրը Գերշ. Տէր Հայկազուն Եպիսկոպոս Նաճարեանը:

Տարիները անցան իր մականին տակ և մենք բոլորս միասին փորձառութեամբ տեսանք և ապրեցանք բեղուն աշխատանքը և պտղաբեր արդիւնքները այս նուիրեալ մշակին, նախ որպէս եկեղեցի, Առաջնորդարան և ապա որպէս գաղութ ընդհանրապէս:

Առաջնորդարան, Առաջնորդութիւն, Առաջնորդ շատ կարճ ժամանակամիջոցին միաձուլուեցան և ձգեց այն տպաւորութիւնը, որ մեր առաջնորդը ցկեանս մեզի հետ է:

Հայրենիք, Արցախ, Մփիւռք այդ նոյն տարիներուն ունեցան լուրջ մարտահրաւերներ և պատահեցաւ որ փետեն մեր վարդի թերթերը երբ մենք կը փորձէինք փուշին անգամ կեանք տալ: Արիւն հոսեցաւ և կրկին մոխիր դարձաւ հայրենի տուն, բայց եղան նաև նուաճումներ և կը շարունակուի այդ ամէնը խոստումնալից կերպով , որ մեր փոքր ածուն պիտի դառնայ պտուրակ և Սօսեաց անտառ:

Գաղութէն ներս յիշատակելի էին Ցեղասպանութեան և Հայստանի առաջին հանրապետութեան հարիւրամեակներու տօնակատարութիւնները բազմաթիւ այլ յիշատակութիւններու կողքին, առանց մոռնալու նոր առաջնորդարան շէնքի կառուցումը և Միտնիի Արեւմտեան շրջանի Տուրք Երրորդութիւն եկեղեցւոյ օծումը և բացումը և մանաւանդ Թեմական խորհուրդի վերակազմութիւնը պատկառելի ազգայիններով և անոր գործունէութիւնը , որ Առաջնորդ սրբազան հօր հետ համատեղ նոր վարկ մը տուին գաղութին և ընդհանրապէս սփիւռքի հասարակածին վրայ հաստատեցին աւստրալահայ գաղութի հանգամանքը

Այսօր դժուար է պատկերացնել գաղութը առանց սրբազան հօր, օրուայ իրականութիւնը կարծես պահ մը սառեցուցած է մեր զգացումները, այնպէս ինչպէս պատահեցաւ Արցախի կորուստի պարագային: Անշուշտ կը հաւատանք , որ ամէն ինչ, որ կը վերջանայ նոր սկիզբ կը խոստանայ, որու մասին նոյն ինքն սրբազան հայրը քանիցս անդրադարձած է : Բայց որքա՞ն դժուար է ծայրէն սկսիլ, նորը կերտել և զարգացնել առանց նախկիններու հիմերուն:

Որպէս գաղութ ունինք հասունութիւն, փորձառութիւն, այո՛ տակաւին կան շատ մը թերութիւններ, բայց որպէս գաղութ ունինք լայն հնարաւորութիւններ և կարելիութիւններ աւելին ընելու և ձեռք բերելու ի նպաստ հայրենիքին և մեր ներքին գաղութային ազգային, մշակութային , կրթական պահանջներուն, որուն մասին սրբազան հայրը յաճախ ակնարկած է և պատահական չէ նաև , որ սրբազան հայրը իր եզրափակիչ խօսքին մէջ շեշտեց շարունակել համերաշխաբար աշխատիլ գաղութէն ներս և կոչ ըրաւ բոլոր կազմակերպութիւններուն միշտ նկատի ունենալ համագործակցութիւնը իր լրումին հասցնելու ընդհանրական պահանջները և ոչ թէ հատուածայինը:

Ընդունելությունը կազմակերպուած էր «ՄԻՐԱՄԱՐ» հանդիսասրահին մէջ , որ համապատասխան ծաղկեփունջերով զարդարուած էր մանաւանդ պատուոյ սեղանը: Ներկայ էին կազմակերպութիւններու , միութիւններու ներկայացուցիչներ ինչպէս նաև բազմաքանակ հասարակութիւն մը: Հիւրերու կարգին կային նահանգային պետական ներկայացուցիչներ, քոյր հարանւանութիւններու ներկայացուցիչ կղերականներ, Հայ առաքելական եկեղեցւոյ քահանայ հայրեր, Հայ Աւետարանական եկեղեցւոյ վերապատուելիներ: Հիւրեր նաև Ատելէյտէն

Օրուայ հանդիսավարն էր Դիւանապետ Պրն. Նշան Պասմաճեան , որ մասնաւոր ժամանած էր Նոր Զելանտայէն նաև այլ առաջադրանքներով:

Հրաշափառի երգեցողութեամբ , Վարդան Սրկ. Էլմասեանի կատարողութեամբ շքախումբը ներս մտաւ և գրաւեց պատուոյ սեղանը: Սեղանի օրհնութեան աղօթքէն վերջ բացման խօսքով հանդէս եկաւ Նշան Պասմաճեան, որուն յաջորդեց Թեմական Խորհուրդի անունով Պրն. Ստեփան Գրքեաշարեանի ելոյթը:

Գեղարուեստական յայտագրին իրենց մասնակցութիւնը բերին ՀԲԸՄ.ի

“Թամգարա” պարախումբը , որ ընդունուեցաւ ջերմ ծափահարութիւններով, մանաւանդ իրենց երկրորդ ելոյթին առիթով:

Օրուայ փայլուն աստղն էր , ինչպէս միշտ սոփրանօ՝ Նաթալի Արոյեան որ դաշնակահար Ալէքս Սահակեանի նուագակցութեամբ կատարեց 3 երգ , որոնցմէ ուշագրաւ էր “Տելէ Եամանը” որ ինչպէս յայտնի է սիրոյ տխուր պատմութիւն է և հակառակ ուրախ մթնոլորտին կայ նաև մշուշոտ տխրութիւն մը և շատ հաւանաբար սրբազանը ևս կը բաժնէ այդ զգացումները, մանաւանդ ինքը , շատ հաւանաբար կը յիշէ Լուսինէ Զաքարեանի կատարողութեամբ երգը , որ կը նկատուի երաժշտական լաւագոյն տարբերակը:

Մանուկ Գոթոյանի արտասանութիւնը “Գէորք Էմինի” “Մենք” արտասանութիւնը որ ներկայացումէն աւելի բառերն էին որ տպաւորեցին մեզ « Ինչո՞ւ մեզ սեղմեցիք այնքան , որ մենք աղամանդ դառնանք» մեզի համար սրբազանը առանց սեղմելու աղամանդ է և որպէս աղամանդ պահ կը դրուի մեր սրտերուն մէջ:

Եկեղեցւոյ քառեակը Իգապէլ Մարգարեան-Տէր Թադէոսեան՝ սոփրանօ, Ալին Եափուճեան՝ ալթօ, Արի Եափուճեան՝ Պասս , Պօղոս սրկ. Քելէշեան՝ Թէնօր, ինչպէս նաև վարիչ-ղեկավար իսկապէս հմայեցին մեզ իրենց ելոյթով:

Եզրափակիչ խօսքով բնական է հանդէս եկաւ Գերշ. Տէր Հայկազուն Արք.պս Նաճարեանը, որ հակառակ իր մեկնումին խոստացաւ կապի մէջ մնալ Աւստրալահայ գաղութին հետ և միաժամանակ Հայրենիքի հեռավորութենէն հետեւիլ գաղութին: Հակառակ բաժանումիբ նշեց , որ ասիկայ մնաք բարով չէ այլ բաժանում կրկին հանդիպելու խոստումով՝ հոս կամ հոն:

Երեկոն վերջ գտաւ լուսանկարչութեամբ, ձեռով մը նաև անմահացնելու տուեալ առիթը առ ի յիշատակ եկող բոլոր ժամանակներուն և սերունդներուն:

Բարի երթ սրբազան հայր, մենք ալ ՀԲԸՄ.ի և “Միութիւն” ամսաթերթի անունով ձեզի կը մաղթենք լաւագոյնը և հայկական աւանդական մօտեցումով կ’ըսենք- “Սրբազան հայր ոտքդ քարի չհանդիպի”:

Պատուոյ սեղանը , սրբազանը հիւր կղերական և պետական դասին և հիւրերուն հետ:



ՄԻՈՒԹԻՒՆ - MIOUTUNE



Լուսանկարներու շարքին՝ Սրբազան հայրը եզրափակիչ խօսքի ժամանակ, Սուրբ Յարութիւն եկեղեցւոյ բառեակը , ՀԲԸՄ.ի Թամգարա պարահոլմբի ելոյթը և ընդհանուր սրահը՝հանդիսականներով

ՀԲԸՄ.Ի Միտնիի Մասնաճիւղի ԹԱՄԶԱՐԱ Պարախումբի ելոյթը
“ՀՈՂԻՆ ԿԱՆՉԸ”

Շաբաթ 1 մարտ 2025-ին

ՀԲԸՄ.Ի Միտնիի Մասնաճիւղը, ինչպէս նախապէս ակնարկած էինք , վերելքի մէջ է և դարձեալ ընդգրկուած ազգային, մշակութային իր առաքելութեան մէջ:

Կրկին կը յիշեցնենք , որ այս տարի կը լրանայ ՀԲԸՄ.Ի Ալեքսանտր վարժարանի 35 ամեակը և այս առիթով կը նախաձեռնուին համապատասխան ձեռնարկներ, որոնց մասին աւելի ուշ պիտի տրուին համապատասխան տեղեկութիւններ և մանրամասնութիւններ:

Քովիտը կարծես մահաքունի մատնած էր բոլորը, անկախաբար, մեծ կամ փոքր կազմակերպութիւն և ահա այդ շրջանին ծնունդ առաւ այնքան սպասուած ՀԲԸՄ.Ի Երիտասարդ Արհեստավարժներ խումբը, որ տարիներու ընթացքին պիտի տայ իր գործունէութեան արդիւնաւետ պտուղները և շատ հաւանաբար ոչ միայն ՀԲԸՄ.Ի այլ նաև գաղութիս ապագայ ղեկավարները:

ՀԲԸՄ.Ի “Թամզարա” պարախումբը եւս ազդուած էր այդ մահաքունէն ծնունդ առած ընկերային և այլ դրդապատճառներէ:

Բնական է և տեղին յիշել և մեր յարգանքը մատուցել պարախումբի առաջին պարուսոյցին և ղեկավարին՝ Նազարէնա Արապեանին:

Յաջորդող տարիներու ընթացքին պարախումբի անդամները աւելցան ու պակսեցան հրաժարականներուն կողքին: Ներկայի անձնակազմը կ’ընդգրկէ ՀԲԸՄ.Ի Երիտասարդ Արհեստավարժներու անդամներ, որոնք իրենց մտային աշխատանքի կողքին կ’աշխատցնեն նաև ձեռքերն ու ոտքերը և ինչու չէ նաև մարմինը:

Այսօր պարախումբի պարուսոյց ղեկավարն է Թինա Նաթարեան:

Մարտ 1-ը հարաւային կիսագունդի գարնանային առաջին օրն է, փոթորիկն ու որոտումը աւելի բեմին վրայ տեղի կ’ունենար ,բուն ծափահարութիւններով դիմաւորուած, միւս կողմէ ակամա կը տարուինք կրկնելու բանաստեղծին խօսքերը –

“Ու Նայիրեան աղջիկների հեզաճկուն պարն եմ սիրում” այլափոխելով և ըսելով ՀԲԸՄ.Ի Թամզարա պարախումբի աղջիկների հեզաճկուն պարն եմ սիրում և տղաների ոտքերի դորդիւնը”:

Հանդէսի ներկայացումը տեղի ունեցաւ ՔՈՆՔՈՒՐՍ ՍՐԱՀԻՆ մէջ` ՉԱԹՍՈՒՏ,: սրահը լի էր հանդիսականներով և հրաւիլեալներով: Բացման և բարի գալուստի խօսքերով հանդէս եկաւ Միութեան քարտուղար՝ Քրիստին Աբիկեան:

հանդիսատեսին հետաքրքրութիւնը և ակնկալութիւնը իրար բախեցան երբ լոյսերը հանգեցան և կիսամութ վիճակին Թամզարա պարախումբը սկսաւ իր Նոր Մերունդ պարը, որ Գեորգ Էմինի խօսքերով մենք ալ կ’ըսենք “Սա պար չէ , այլ մի ամբողջ ժողովուրդի պատմութիւն”, որուն նոր սերունդն անգամ ծանօթ է և պատրաստ գայն փոխանցելու գալիք սերունդներուն: Հողի կանչը մագնիսական է բոլորիս համար և այդ մագնիսէն ոչինչ կը պակսի սփիւռքահայ ըլլալով:

Հաճելի անակնկալ էր “ՍԱՅԱԹ ՆՈՎԱ” նուագախումբի ելոյթը և մանաւանդ երգացանկը:

Առաջին նուագը , “Տուն Իմ Հայրենի” որ ծանօթ է որպէս Արապօ Իսպիրեանի կատարողութեամբ երգ , բայց աւելի զգայացունց դարձած Տաթև Ասատրեանի մեկնաբանութեամբ - “Կօտել եմ տուն իմ հայրերի, դու ամբոցն ես հօգօ հայրերի, դու մատուռն ես մեր քնքոյշ մայրերի հայրենիք, աղօթում եմ , որ Աստուած պահապնի”:

Իսկապէս յուզիչ էր պահը, երբ հետեւելով երաժշտութեան կրնայինք շարունակել և ըսել- “Օտարութիւն իմ կամքից անկախ, հայի ոգով ապրում եմ անկախ” Բայց նաև վիրաւոր, գիտենալով, որ “քեզ իւրէն են, թալանել են, դարձել են օտարի գերի և որդիներդ գերի Օտարի” և այսպէս յաջորդաբար:

Նուագախումբի անդամներն են՝ Քարլօ Բիրզէկեան՝ դաշնամուր, Ալէք Բիրզէկեան՝ սրինգ,

Սերժ Թահանեան՝ տիոլ և Յակոբ Հարֆուչեան՝ Սաքսաֆոն, իսկապես գնահատելի և խոստումնալից նուագախումբ, երկար ժամեր հաճոյքով կարելի է լսել: Հաճելի էր տեսնել նաև քոյր եղբայր կամ արենակից զոյգերը, ինչպես՝ Ալինա և Անտրէ Զոպանեանները և Ալին և Արի Եափուճեանները, որոնց միացած է իրենց զարմիկը՝ Ռաֆֆի Ճէպէճեանը և Քիւրումլեան Անին և Արէնը: Հաճելի էր վկայել Արաքսի Աբիկեանի ելոյթը, թէ ինչպես աշակերտական տարիներէն վերջ անբաժան մասն է Թամզարա պարախումբին:

Երկրորդ բաժինի առաջին ելոյթը կը յիշեցնէր վրացական "Գինդոների պարը" ծիծաղաշարժ սիրային տարբերակով:

Մասնաւոր ուշադրութեան արժանացած էր հագուստներու ընտրութիւնը որ լրացուցիչ մաս և բաժին բերած էր պարարուեստին: Բնականաբար մեր մասնաւոր գնահատանքը կ'երթայ Թինա Նաթարեանին որ կարողացաւ այս ամէնը համախմբել և որպէս ծաղկեփունջ մեզի ներկայացնել: Հողին Կանչը հարազատ է և մնայուն: Կ'ակնկալենք իրմէ, ՀԲԸՄ-էն և Թամզարայէն ընդհարապէս մեր ծառաւոր միշտ հագեցած պահել:

Երեկոն վերջ գտաւ "Քոչարի" աւանդական հզօր պարով, որուն յաջորդեց Աւագ քահանայ Տէր Նորայր Բաթանեանի պահպանիչը, Առաջնորդ սրբազան հօր բացակայութեան, քանի որ ճիշտ նոյն օրը իր պաշտօնը աւարտած կը վերադառնար Մայր Հայրենիք, Մայր Աթոռ: Քրիտին Աբիկեանի շնորհակալական խօսքերէն վերջ: Շնորհակալութիւններ արտայայտուեցան մասնաւորաբար երաշխաւորներուն, որոնց օժանդակութեան շնորհիւ կարելի կ'ըլլայ իրագործել նմանօրինակ ազգային և մշակութային ձեռնարկներ չոր անապատային սփիւռքի ովասիսներուն:

Պարէ Թամզարա և թող ողջ աշխարհ իմանայ որ սա պար չէ՝ այլ մի ամբողջ ժողովուրդի հզօր պատմութիւն, որ պարտութիւնն անգամ ունի՝ հպարտութիւն: Ձայն տուէք իրարու որ հերթով գան միանաւոր պարախումբին, աղջիկները կարմիր հագած, տղաները՝ փուշի կապած, Թ'է հերիք է հնձենք վարենք եկէք Մասնայ պարը պարենք:

Թամզարա պարախումբ բոլոր բեմերուն զարդը դառնաս, որ նոր հարս ու փեսայ ելլեն շարքերէն, ու նոր Օրօրոց երթայ ու գայ և հողի կանչը հարազատ տուն դառնայ՝ Արարատէն-Արագած, որ հայ ժողովուրդը իր պարը պարէ այս լեռներու լանջին: Կու գայ այդ օրը երբ մենք բոլորս այդ նոյն ջանքով և կամքով կը պարենք: Պարէ Թամզարա, պարէ հայ ժողովուրդ՝ որ թշնամին անգամ փախուստի ճամբան չիմանայ:



ՀԲԸՄ.ի Թամզարա պարախումբի ելոյթէն և Մայաթ Նովա նուագախումբը

Կարեն Գարակիլեանի Եւ Վաչէ Թովմասեանի Մասնակցութեամբ «Անորա» Ֆիլմը Արժանացաւ 5 «Օսքար»-ի

Դերասաններ Կարեն Գարակիլեանի եւ Վաչէ Թովմասեանի մասնակցութեամբ «Անորա» ֆիլմը արժանացաւ 5 «օսքար»-ի, ընդ որում, լավագոյնը ֆիլմ անուանակարգին մէջ:

Ամերիկացի ֆիլմի բեմադրիչ Շոն Պէքքըրի ֆիլմը, որ կը պատմէ ռուս օլիկարխի որդիին հետ ամուսնացած պարուհիի մասին, արժանացած էր Քաննի 77-րդ միջազգային ֆիլմի փառատօնի «Ոսկէ արմաւենիի ճիւղ» մրցանակին:



**We're with you,
and your people.**

Looking for a bank that's committed to helping you achieve your financial goals?
We're here to support you and your family. For truly personal service,
talk to one of our dedicated Relationship Managers today.

 **Bank of Sydney**

Bank of Sydney Ltd ABN 44 093 488 629. AFSL & Australian Credit Licence 243444

13 95 00 / banksyd.com.au

«Գանձասար»-ի թղթակցը Լաթաքիայի իրավիճակը մտահոգիչ կը գտնէ

Սօրիոյ Լաթաքիա քաղաքի իրավիճակը կայուն կը թուի,, Բախումներ չկան, սակայն բնակիչները բնակարաններէն դուրս չեն գար, իսկ ժամանակ առ ժամանակ կը լսուին կրակոցներու ձայներ: Բախումներու ընթացքին 1000 և ավելի մեռեալներու կողքին ,կան եհրկու հայ զոհեր:

«Անվտանգութեան ուժերը տարածուած են քաղաքի կենտրոնական թաղամասերուն, նրանք կը խուզարկեն անցնող մեքենաներն ու մարդկիկ վտանգավոր երևոյթները կանխելու համար: Դպրոցները առայժմ կը մնան փակ: Բնակչութիւնը տնտեսական դժուարութիւններ, ունի որովհետև գործատեղերը չեն աշխատիր: Ջուրի հետ կապուած տագնապը դեռ կը շարունակուի,բայց քաղաքին մէջ կը կատարուի ջուրի բաշխման սպասարկութիւն կը նշէ «Գանձասար» թերթի թղթակիցը:



Ներկայիս Սուրիահայերու տեղափոխումը Հայաստան, գրեթէ անհնար է ՀՀ Սփիւռքի գործերու գրասենեակ

ՀՀ Սփիւռքի Գործերու Գլխաւոր Յանձնակատարի գրասենեակի խօսնակ Նելլի Ղուկեան ԱրմէնՊրէսի միջոցաւ հաղորդած է , «Սուրիահայերը Հայաստան տեղափոխուելու հարց չեն արծարծած »Ղուկեան նշեց , որ գրասենեակը, այս հարցով միշտ կապի մէջ է Արտաքին Գործոց նախարարութեան հետ և հակառակ պարագային , եթէ իրավիճակը հանդարտի և մեր հայրենակիցները նման առաջարկ ներկայացնեն, պիտի օժանդակենք հնարաւոր բոլոր միջոցներով:

Երուսաղէմի հայ գաղութը լուրջ հարցադրումներու առջեւ կը գտնուի

Երուսաղէմի հայ գաղութը , քաղաքապետարանի չվճառուածտուրքերու հարցով , կը գտնուի լուրջ վտանգի մէջ: ՀՀ սփիւռքի գլխաւոր գործերու Յանձնակատար հաղորդած է , որ գաղութիապագան և յարատեւութիւնը լուրջ սպառնալիցի տակ է տուրքերու այս հարցով:

Ինչպէս յայտնի է կան մթին հարցեր պատրիարքութեան պատկան կալուածներու եւ ընթացիկ դատական հարցեր: Այսօր կայ նաև երուսաղէմի քաղաքապետարանին կողմէ պահանջուած տուրքեր, որ փաստօրէն յետնեալ կերպով կ'երկարի մինչեւ 1980 ական թուականները, Գումարը զգալիօրէն մեծ է, որոնց որպէս փոխարժէք կը պահանջուին անշարժ գոյքեր, որ կրնայ վտանգել հայ գաթութի ներկայութիւնը Երուսաղէմի մէջ, ըսած է Զ. Սինանեան: Կալուածներ , որ դարերու ընթացքին գնուած են պատրիարքութեան և բարերարներու կողմէ :

Գաղութը այսօր կը դիմագրաւէ այս կալուածները կորսնցնելու վտանգին առջեւ: Բնական է այս ամէնը տեղական հարցեր են և անմիջականօրէն չեն կապուած Հայաստանին, բայց կացութեան առջեւ գտնուողներ կը դիմեն Հայաստանին լուծումներ գտնելու համար:



Հայաստանի «Խաղաղության Խաչմերուկ» Նախաձեռնությունը Ռազմավարական Նշանակություն Ունի. ԵՏՅ Առևտրի Վարչություն

Հայաստանի Հանրապետության կողմէ յառաջ քաշուած «Խաղաղության Խաչմերուկ» նախաձեռնությունը ռազմավարական նշանակություն ունի:

Մոսկուայի մէջ «Արմէնփրես»-ի թղթակիցին հարցումին ի պատասխան՝ այս մասին նշած են Եւրասիական Տնտեսական Յանձնաժողովի առևտրի հարցերով վարչութենէն:

«Մենք կ'ակնկալենք, որ «Խաղաղության Խաչմերուկ» ծրագրի իրականացումը զգալիօրէն պիտի ամրապնդէ Հայաստանի դերը Մեծ Եւրասիական տարածքին՝ յատկապէս ճանապարհային միջանցքներու ընդլայնման եւ տարանցիկ ներուծի աւելացման շնորհիւ: Հարաւային Կովկասի մէջ ճանապարհային երթուղիներու բազմազանումը դրական ազդեցություն պիտի ունենայ ոչ միայն տարածաշրջանի փոխադրութեան համակարգի, այլեւ ԵԱՏՄ-ի եւ երրորդ երկիրներու, այդ շարքին՝ Իրանի հետ առևտրային կապերու զարգացման վրայ», - ըսուած է պաշտօնական մեկնաբանութեան մէջ:

Գերատեսչութիւնէն կարելորած են, որ Իրանի կառավարութիւնը եւս պաշտօնապէս յայտնած է իր աջակցութիւնը այդ նախագիծին՝ ընդգծելով, որ ԵԱՏՄ անդամ պետութիւններու եւ Իրանի միջեւ համագործակցութիւնը յարաշարժօրէն կը զարգանայ:

